ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 24>> դեկտեմբեր 2014թ N 94
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ -728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 17-ի N1192-Ա որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Աշխատակազմի ղեկավարի (ծածկագիր՝69-1.1-1) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի՝

<<VI. Գիտելիքները և հմտությունները>> բաժնի <<կամ մինչև 2015 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ>> բառերը փոխարինել <<կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն երեք տարին՝ ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում>> բառերով.

2) գլխավոր պաշտոնների խմբի ստորաբաժանման ղեկավարների (ծածկագիր՝69-2.1-1), (ծածկագիր՝69-2.1-2), (ծածկագիր՝69-2.1-4), (ծածկագիր՝69-2.1-5), (ծածկագիր՝69-2.1-6), (ծածկագիր՝69-2.1-7), (ծածկագիր՝69-2.1-8), (ծածկագիր՝ 69-2.2-2), (ծածկագիր՝ 69-2.2-8), (ծածկագիր՝ 69-2.2-9), (ծածկագիր՝69-2.2-11), (ծածկագիր՝69-2.2-12), (ծածկագիր՝ 69-2.2-13), (ծածկագիր՝ 69-2.2-14), (ծածկագիր՝69-2.2-16), (ծածկագիր՝69-2.2-18), (ծածկագիր՝69-2.2-19), (ծածկագիր՝69-2.2-20), (ծածկագիր՝69-2.2-21), (ծածկագիր՝69-2.2-22), (ծածկագիր՝69-2.3-10), (ծածկագիր՝69-2.3-11) քաղաքացիական ծատայության պաշտոնների անձնագրերի՝

<<VI. Գիտելիքները և հմտությունները>> բաժնի <<կամ առնվազն հինգ տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության

համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2015 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ>> բառերը փոխարինել <<կամ առնվազն երեք տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում>> բառերով.

3) գլխավոր պաշտոնների խմբի՝ (ծածկագիր՝ 69-2.2-4), (ծածկագիր՝ 69-2.2-5), (ծածկագիր՝ 69-2.2-15), (ծածկագիր՝ 69-2.3-3), (ծածկագիր՝ 69-2.3-4), (ծածկագիր՝ 69-2.3-7), (ծածկագիր՝ 69-2.3-9), (ծածկագիր՝ 69-2.3-13), (ծածկագիր՝ 69-2.3-14), (ծածկագիր՝ 69-2.3-15), (ծածկագիր՝ 69-2.3-16), (ծածկագիր՝ 69-2.3-17), (ծածկագիր՝ 69-2.3-18).

<<VI. Գիտելիքները և հմտությունները>> բաժնի <<կամ առնվազն հինգ տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2015 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ>> բառերը փոխարինել <<կամ առնվազն երեք տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ>> բառերով.

4) առաջատար պաշտոնների խմբի (ծածկագիր՝69-3.1-5), (ծածկագիր՝69-3.1-7), (ծածկագիր՝69-3.1-8), (ծածկագիր՝69-3.1-9), (ծածկագիր՝69-3.1-10), (ծածկագիր՝69-3.1-11), (ծածկագիր՝69-3.1-12), (ծածկագիր՝69-3.1-13), (ծածկագիր՝69-3.2-4), (ծածկագիր՝69-3.2-6),

(ծածկագիր՝69-3.2-8), (ծածկագիր՝69-3.2-9), (ծածկագիր՝69-3.2-11), (ծածկագիր՝69-3.2-12), (ծածկագիր՝69-3.2-19), (ծածկագիր՝69-3.2-20), (ծածկագիր՝69-3.2-23), (ծածկագիր՝69-3.2-24), (ծածկագիր՝69-3.3-3), (ծածկագիր՝69-3.3-4), (ծածկագիր՝69-3.3-5) քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի՝

<<VI. Գիտելիքները և հմտությունները>> բաժնի <<առնվազն երկու տարվա ստաժ, կամ վերջին երեք տարվա ընթացքում>> բառերը փոխարինել <<առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացում>> բառերով, իսկ <<կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2015>> բառերը փոխարինել <<կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020>> բառերով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ